# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

| | |
|---|---|
| *ՀԱՄԱՅՆՔ* | ՆՈՐԱԿԵՐՏ |
| *ՄԱՐԶ* | ԱՐՄԱՎԻՐ |



## 1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արմավիրի մարզի Նորակերտ համայնքը հիմնադրվել է 1946 թվականին: Սկզբնական շրջանում այն ձևավորվել է որպես միացյալ կոլտնտեսություն հարևան Բաղրամյանի անվան տնտեսության հետ համատեղ, այնուհետև առանձնացել և կազմավորվել է որպես խորտնտեսություն՝ մասնագիտացված այգեգործական ուղղությամբ՝ զուգակցված պտղաբուծության և անասնապահության հետ: Նորակերտի խորտնտեսությունը եղել է նախկին Էջմիածնի շրջանի զարգացած առաջավոր խաղողագործական տնտեսություններից մեկը: Տնտեսության դրապատային քարքարոտ հողակտորների վրա աճեցված խաղողը աչքի էր ընկում բարձր որակական ցուցանիշներով՝ խաղողի շաքարայնությունը կազմում էր 24.0-27.0%: Ցավոք սեփականաշնորհումից հետո տարբեր օբյեկտիվ և սյուբեկտիվ գործոնների ազդեցության պայմաններում քանդվեցին խաղողի այգիները, որոնք դրվեցին հիմնականում հացահատիկային մշակաբույսերի մշակության տակ, որը ցածր բերքատվության պայմաններում ձեռնատու չէր և ներկայումս ոչ մի հեկտար ցորեն չի ցանվում և չմշակվող հողերի տեսակարար կշիռը համայնքում կազմում է 85-90%:

Նորակերտ նշանակում է նոր կերտված, ինչպես արդեն նշեցինք այն հիմնվելով 1946թ-ին հետագայում ընդարձակվեց և վերածվեց ծաղկուն բնակավայրի: Նորակերտի առաջին բնակիչները եղել են սկզբում մերձավոր արևելքի երկրներից /Սիրիա, Իրաք, Իրան/ հայրենադարձված մեր հայրենակիցները այնուհետև Կոտայքի շրջանի Աստղաբերդ գյուղից վերաբնակեցվել են այդ գյուղի բնակիչները: Հետագայում վերաբնակեցման կարգով համայքում բնակություն են հաստատել հանրապետության տարբեր շրջաններից և հարևան Վրաստանի /Ախալքալաք/ և Ադրբեջանից վերաբնակեցված մեր հայրենակիցները: Այնպես որ բնակչության կազմը միատարր չէ՝ կան նաև եզդիներ:

Համայնքը ունի հիանալի տիպային կուլտուրայի տուն, գրադարան, համայնքապետարան, երկհարկանի դպրոց՝ առանց սպորտ դահլիճի, մանկապարտեզ, փոստ, բուժական ամբուլատորիա:

Համայնքի վարչական տարածքում գործում են մի շարք հիմնարկ ձեռնարկություններ՝ <<Ավտոճանապարհային մեքենաներ>> ՓԲԸ, <<Բարքոս>> ՍՊԸ, <<Բեկոր>> ՍՊԸ և տասնյակ անհատ ձեռներեցներ, որոնք կազմակերպում են արտադրություն և առևտուր:

Երթուղային 205 համարի միկրոավտոբուսը համայնքը կապում է անմիջականորեն Երևան քաղաքի հետ: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատվել կամ ամբողջովին /նաև մասնակի փոսալցումներ/ հիմնանորոգվել են 2014-2015 թվականների ընթացքում, դա շարունակական գործընթաց է, որը ֆինանսական միջոցների առկայության դեպքում անընդհատ կատարվելու է:

Համայնքը շարունակում է կառուցապատվել գլխավոր հատակագծի շրջանակներում:

## 2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նորակերտ համայնքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն ք.Արմավիրից 35 կմ է: Համայնքը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքին, հարավ-արևելքից՝ Պտղունք համայնքին և Վաղարշապատ քաղաքին, իսկ արևմուտքից Շահումյան համայնքին: Համայնքի ընդհանուր մակերեսը 1366.88 հա է:

## 3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

| | |
|---|---|
| Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) | 300 |
| Օդի միջին ջերմաստիճանը հունվարին($^0$C) | -32 |
| Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին($^0$C) | 40 |

## 4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից<br>1.1) | | |
| 2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը | Էջմիածնի շրջան | |
| 3.Համայնքի հեռավորությունը՝ | | |
| 3.1) մայրաքաղաքից (կմ) | 18 | |
| 3.2) մարզկենտրոնից (կմ) | 35 | |
| 3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ) | 25 | |
| 3.4) նախկին շրջկենտրոնից (կմ) | 7 | |
| 3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ) | 3 | |
| 3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ) | 25 | |
| 4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ) | 925 | |
| 5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա) | 13.6 | 1366.88 |
| 6. Սահմանակից համայնքների անվանումները | Էջմիածին, Բաղրամյան, Պտղունք, Շահումյան | |
| 7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն | norakert.armavir@mta.gov.am | |
| 8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն | norakert-hamaynq.am | |
| 9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը | 94932333 | |
| 10. Համայնքապետարանի հեռախոսահամարը | - | |
| 11. Համայնքի հեռախոսային կոդը | +374231 | |
| 12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ) | այո | |
| 13.Համայնքապետարանի փոստային դասիչը | 1142 | |
| 14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ) | այո | |
| 15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ) | ոչ | |

## 5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| | 2018թ. |
|---|---|
| 1. Մշտական բնակչության թվաքանակը | 3198 |
| 2. Գրանցված ծնունդների քանակը | 45 |
| 2.Մահացության դեպքերի քանակը | 23 |
| 3.Ամուսնությունների քանակը | 15 |
| 4. Ամուսնալուծությունների քանակը | 2 |
| 5. Տնային տնտեսությունների թիվը | 619 |
| 6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը | 53 |
| 7. Կենսաթոշակառուների քանակը | 320 |
| 8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը | 71 |

## 6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | 2018թ. |
|---|---|
| 1. Գրադարանների քանակը | 1 |
| 2. Արվեստի դպրոցների քանակը | 0 |
| 3. Երաժշտական դպրոցների քանակը | 0 |
| 4. Նախադպրոցական հիմնարկների քանակը | 1 |
| 5. Հանրակրթական դպրոցների քանակը | 1 |
| 6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 9. Մարզադպրոցների քանակը | 0 |

## 7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

| | 2018թ. |
|---|---|
| 1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ$^2$) | 62710 |
| 2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը | 4 |
| 3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը | 568 |

## 8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | 2018թ. |
|---|---|
| 1.Հողեր, ընդամենը (հա) | 1366.88 |
| 2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա) | 1134.99 |
| 3.Բնակավայրերի ընդհանուրտարածքը(հա) | 168.93 |
| 4.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը | 302 |
| 6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը | 715 |
| 7. Խոզերի գլուխաքանակը | 73 |
| 8. Գյուղատնտեսական տեխնիկա | |
| 8.1տրակտորներ (քանակը) | 7 |
| 8.2կոմբայններ (քանակը) | 0 |
| 9. Գյուղացիական տնտեսությունների թիվը | 567 |

## 9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

| | |
|---|---|
| 1.Էլեկտրական ենթակայանների քանակը | 9 |
| 2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ) | այո |
| 3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ) | ոչ |
| 4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ) | այո |
| 5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 12 |
| 6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը | |

| | |
|---|---|
| 6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը | 12 |
| 6.2 Էքսկավատորների քանակը | 1 |
| 6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը | - |
| 6.4 Գրեյդերների քանակը | 0 |
| 6.5 քանակը | - |
| 6.6 Աղբատար մեքենաների քանակը | 1 |
| 6.7Բազմաֆունկցիոնալ կոմունալմեքենաների քանակը | 0 |
| 6.8Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը | 0 |
| 6.9Ավտոաշտարակների քանակը | 0 |
| 7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 0 |
| 8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը | ոչ |
| 9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ) | ոչ |

## 10.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

| | Ընդունված բյուջե | Փաստացի |
|---|---|---|
| 1.Ընդամենը եկամուտներ | 70711.0 | 72994.0 |
| 2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդթվում՝ | 13367.0 | 15787.4 |
| 2.1 հողի հարկ | 2840.0 | 2997.1 |
| 2.2 գույքահարկ | 10527.0 | 12790.3 |
| 3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը | 53345.8 | 53345.8 |
| 3.1 դոտացիա | 53345.8 | 53345.8 |
| 3.2 սուբվենցիա | - | - |
| 4.Մուտքեր հողի օտարումից | 5050.0 | 5327.3 |

*Համայնքի վարչական բյուջերի ծախսեր(հազ. դրամ)*

| | Ընդունված բյուջե | Փաստացի |
|---|---|---|
| 1. Ընդամենը ծախսեր | 71211.0 | 60579.8 |

*Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները(հազ. դրամ)*

| | Ընդունված բյուջե | Փաստացի |
|---|---|---|
| 1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ | 12805.2 | 13082.5 |

*Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)*

| | Ընդունված բյուջե | Փաստացի |
|---|---|---|
| 1. Ընդամենըծախսեր | 12805.2 | 3414.0 |

## 11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ | 11 |
| որից՝<br>1.1 համայնքային ծառայողներ | 5 |
| 2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ) | 36875.0 |
| 3. Ավագանու անդամների թվաքանակը | 9 |

## 12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

| Հիմնախնդիրը | Ակնկալվող լուծումը |
|---|---|
| 1.Դպրոցի մարզադահլիճի բացակայություն | նախատեսվում է կառուցել սուբվենցիոն ծրագրի շրջանակներում |
| 2.Ոռոգման ցանցերի անբարեկարգ վիճակ | խողովակ կոչվող հատվածը կառուցվում է ՀԲ ծրագրի շրջանակներում,մնացած հատվածները մասնակի նորոգվում են: |
| 3.Փոստային շենքի անբարեկարգ վիճակ | հարցը բարձրացվում է, սակայն լուծման ակնկալիք կարծես չկա: |